

ԽԸ

Անոնք որ արմաւի անապակ գինին կը թաշեն
Եւ անոնք որ գիւերն ի բուն Մեհրապն են աղօթքի .
Աանոնցմէ ոչ մէկր ծախաքը չէ, ամենքն ալ ջուրին մէջն են .
Մին արթուն է, միւսները թուն են :

ԽԹ

Այն միտքը որ Երջանկութեան ճամբուն մէջ հետախոյզ կը շրջի
Օրը հարիւր անգամ ինքը կ'ընէ քեզի .
« Խեղամուտ եղիր ժամանակիդ այս մէկ վայրկեանը
Թէ չես դուն այն խոտը որ կը հաւքուի եւ վերստին կը բուսնի :
ԷՕՄԷՐ ԽԱՅԵԱՄ

Թարգմ.
Գ. ՓԱՌՆԱԿ

ԿԱՌԱՐԾԱԻ

Տե՛ս, նենգաւոր ու խուլ ու թաց թու քարայրիդ մուտքին վերեւ
կառք մը որուն բոցաճառանչ անխնեւն են երկու արեւ .
Եւ սանձերն ալ՝ հուր փայլակներ բռնավարող ամպէ անեղ,
Ամպէ մըրկոտ երիվարներ որոնց կուրծքին ներքեւ հեղեղ

Ու բաշերուն վրայ ովկեան կը մըռնչեն, տե՛ս, ո՛վ նախկին
Արքաներու ինքնամոտաց հըղօր սերունդ, ըզքեզ կրկին
կը կանչէ կառքն արշաւներուն . . . Օ՛ն, խոյացի՛ր եւ թող ճամբան
Գեղ առաջին տեսնէ կարող հորեղոնները անխափան . . .

Կը բարձրանայ մինչեւ երկինք փռչին պեղած ակօսներուդ
Որուն ետին վարագուքուած ախոյաններդ կը զաւարուին . . .
Դուն , անմուտր, թաւ Ուժեղուդ մըղէ՛ երամը խըմբովին :

Եւ պատահի եթէ երբեք արահետի մը մէջ ժեռուտ
Որ նեւէ վար քեզ նախանձին կամ գիպուածին ձեռքն անպատեհ՝
— Սուրբ՝ կառքիդ շուտ ետեւէն, 'ւ անխնեւն զայն, պինդ, կապակ՝ :

Վ. ՏԻՐԱՆԵԱՆ